ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

02.04.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/36-1 գնման պայմանագրի

ք. Երևան «02» «07» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԴԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.04.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/36-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը և **Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով սահմանված ***Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների*** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է **2** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԷԴԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ՀՀ ֆինանսների նախարարության	Զոլաքար, 6-րդ փող. տուն 7
գործառնական վարչություն	Բանկ՝ «Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900032542145	Հ/Հ 2472404617200000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 08425035
Վ.Պապիկյան ----------	Ա. Սիմոնյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ